

ԲԱԺԱՆՈՐԳ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուլխարիոյ հասկար
 Տարեկան 10 Ֆր.
 Վեցամսեայ 5 »
 Արտասահմանի հասկար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐԵԼԻ
 —) —
 Գրութիւնք և ս չնկ տրուիր
 —) —
 Ծանուցման տողը 20 սանթիմ է. երեքին աւելի սանթիմերու համար 20 Օլո գեղջ կըլլայ :

ՇԱՐՋՈՒՄ

Նախակ և գրաւ որկնջ
 Խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄՈՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՆԱՆԱՏՈՒ 3. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՍԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Ներկայ թուով «Շարժում» կը լրացնէ իր գոյութեան առաջին տարեշրջանը : Մեր ընթերցողները կարող են իրենք գնահատել, թերթերով «Շարժում» ժողովածուն, այն ամէն ջանքերն ու խնամքները, որոնք թափուած են թերթին կանոնաւոր հրատարակութեան համար և պարունակութեան շահեկան, այլազան և հետաքրքրական ընծայելու նպատակաւ, հակառակ իր համաս ըմբռնութեան, առանց միանգամայն շեղելու յառաջդիմական և լուսաւոր ուղիէն, առանց մոռնալու անաչառութեան և անկախութեան սկզբունքները : Աւրախալի է որ հասարակութիւնը գնահատեց իր ջանքերը, և այժմ «Շարժում» իր երկրորդ տարուան գոյութիւնն ապահոված, պիտի շարունակէ հրատարակուիլ առաջին ուղղութեամբ և առաջին ծրագրով : Մենք կը հրաւիրենք մեր համակիրներն ու ընթերցողները աւելի ստուար թուով բաժանորդագրուիլ թերթին, որպէս զի միջոց ունենանք այդ կերպով աւելի բարելաւել իրենց լրագիրը և կարելի եղած ատեն մեծցնել անոր ծաւալն ու ճոխացնել պարունակութիւնը :

ՀՈԳԻՆԵՐՈՒ ՏՈՒՐԵԿԱՆ

Սեր ընթերցողները կարգացին անշուշտ նախորդ թուին ազգային քրոնիկի մէջ արձանագրուած այն բաղմամբի կրօնափոխութիւնները որոնք Հայաստանի զանազան կողմերը ակտիւ կրօնական ժամանակէ մը ի վեր աւետարանի անուամբ ժողովրդին մէջ շրջող Հռոմի անխիղճ մարգորսներու ձեռքով : Հայ մամուլին ախուր պարտականութիւններէն մէկն ալ է, որը օրին արձանագրել բոլոր այն բարբարոս արշաւանքները, որոնք օտար դաւանութեանց առաքելներու մեր կրօնական աշխարհին մէջ խարհին մէջ :

Ներք օտար դաւանութեանց առաքելներու ձեռքով կը կատարուին մեր կրօնական աշխարհին մէջ : Հերիք չէ որ թուրք կառավարութիւնը իր ճնշող, սպաննող ուղղութիւնով, հայը իր հայրենիքին մէջ անտանելի պայմաններու կենթարկէ, հերիք չէ որ քրիստոնէի չէրքէզը, յայտնի կամ գաղտնի կանպատւեն կը շարժուին անպաշտպան հայութիւնը, ու ահա անոնց վրայ կաւերնան ան խարդախ առաքելները, որոնք Հռոմի զրկուած, ոչինչ առաւելութիւն չունենալով մեզ հալածող այլակրօններէն, իրենց ծուղակները կը լարեն, ուղիները կը նետեն, ամբողջացնելու համար բռնապետութեան և բարբարոսութեան սկսած հայտնի զործր : Իրօնքի անունով եղած ատարչականքները կարծես ճակատագրական են մեր ազգին համար : Ամէն անգամ որ հայը, զէնքը ձեռքը նետուած է պատերազմի դաշտը, իր արիւնով պաշտպանելու համար իր ազգային և կրօնական իրաւունքները, և երբ իրեն վրայ խուժող սպառնալիներու վաճակներէն նեղը մնացած, արեւմուտք դարձուցած է աչքերը օգնութիւն գտնելու յուսով, կրօնակիր ազգութիւնները միշտ ստիպած են զինքը ամբարիշտ սակարկութեան մը մտնելու իրենց հետ, և շատ անգամ այնքան վիրաւորուած է որ գերագաս համարած է այլակրօններու լծին տակ մտնել քան քրիստոնէայ ազգերու անխիղճ առաջարկներուն համակերպիլ : Կողմնակիցներ ըլլալով խղճի կատարեալ ազատութեան, բառ մը անգամ չի պիտի արտասանէինք ատոնց դէմ, և թէ երբէք հայը իր ներկայ ճգնաժամուն մէջ կարող ըլլար իր գիտակցութեան տէր մնալու : Բայց երբ մէկ կողմէն թուրքին հարստահարութիւնները հայը ծայրայեղութիւններու և ինքնամոռացութեան կը մղեն, երբ միւս կողմէն հայ հոգեւորականութիւնը ոչ միջոց ունի և ոչ ալ ազատութիւն իր հօտին շահերը պաշտպանելու ամբողջովին, դատապարտելի կը գտնենք օտար առաքելներու հոգիներու այս տուրեւաւոր, որ զիրենք հասարակաց վախառուններէն վարկիչեցնէ :

Ս. յգ վերապատուելի Ֆրէրները մեզի հետ մէկտեղ անշուշտ լաւ համոզուած են որ, Հայաստանի մէջ պատահած ներկայ կրօնափոխական շարժումներուն մէջ, ոչ պատկերները դեր ունին, ոչ մասունքները և ոչ ալ Հռոմի գերագահութիւնն ու «ՅՈՐԳՈՅ ԲԴԻՍՄԱՐԸ», այլ ատոնց բուն շարժառիթն է պատառ մը հացը և քիչ մըն ալ սպառնալից գտնելու յոյսը : Այլապէս յիմարութիւն պիտի ըլլար ենթադրել թէ, իր աղբիւրին բղխած տեղը մոռցած հայ մը կարող պիտի ըլլար խելք հասցունել այնպիսի խնդիրներու, զորս նոյն իսկ քարոզողները կանգիտանան թերեւս . . . : Ոչ տեղն է հոս և ոչ ալ ժամանակը կրօնական վէճ մը բռնկեցնելու, բայց գիտական այս դարավերջին մէջ երբ հետզհետէ կը ջնջուին «անոյ առաւելութիւնները» սա համոզումը ունենանք թէ Հայաստանի մէջ սողացող Հռոմի առ կեղծապարիշտ առաքելներէն շատերը մանանխի չափ հաւատք չունին իրենց քարոզած սկզբունքներուն վրայ, և լոյ իրենց ամսականներու ապահովութեան համար է որ կը գործեն, քանի որ նիւթակա պահովութեան մը կեղծ խոստումներով և քանի մը զրուշի փոխանակութեամբ միայն կը յաջուին զլուխ հանել իրենց ճիւղային որսորդութիւնը : Աւելի երկար չենք ուղեր ծանրանալ այս կէտին վրայ, երբ արդէն այնքան գրուած ալ է, բայց փափագելի է որ հիմնական միջոցներ ձեռք առնուին միանգամ ընդ միշտ վերջ մը տալու համար սա բարբարոս տուրեւաւոր : Հայոց հոգեւոր բարձրագոյն

իշխանութեան պարտականութիւնն է շրջաբերականով մը հասկցնել Եւրոպայի հոգիներու գերեզմանութեան վրասաները և խնդրել որ ետ կանչեն իրենց երկիրներէն արտաքուտած պորտաբոյժ առաքելները : Նմանապէս Եւրոպա գտնուած Միթիթարեան միաբաններն ալ, որոնք իրենց մատուցած ծառայութիւններով իրաւամբ արժանացած են մեր յարգանքին և երախտագիտութեան, սրբազան պարտականութիւն պէտք է համարեն իրենց ձայնն ալ խառնելու մերինին հետ, կեցնելու համար այս այնքան եպտերի գործունէութիւնը, որ թէ մեզի և թէ իրենց անպատուաբեր է և հակառակ նոյն իսկ աւետարանի ոգիին : ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ՊՈՒԿԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Անցեալ տարիէն ի վեր երկրին չորս կողմերէն տեղացող անվերջ և յամառ բողոքներու տարաբար, 2—3 ամիսներէ ի վեր գրեթէ Պուլխարիոյ բոլոր քաղաքներուն մէջ տեղի ունեցած աղմկալից և արեւնահեղ միթիւնները, իշխունի և զինւորական նախարարին միջեւ եղած անհամաձայնութիւն մը, և վերջին անգամ Արեւելեան Ռումէլիի երկաթուղեաց պայմանագրութեան Սուլթանի կողմէ վաւերացման ուշանալը ստիպեց վերջապէս Սթոյիլովի նախարարութիւնը, որ հրատարի ճիշդ 4 տարի և 8 ամիս կառավարութեան զեկը իր ձեռքը ունենալէն վերջ : Իսկ Ն. Ա. Իշխանը ինչպէս միշտ՝ նոյնպէս և այս անգամ յարգելով իր հպատակներուն կամքը, ընդունեց իր նախարարներու հրատարականը և յանձնարարեց Պ. Կրէքօֆին կազմել նոր նախարարութիւնը : Պ. Կրէքօֆ, որ հանրածանօթ Սթամպուլովի դահլիճին անգամ էր իբրև արտաքին գործոց նախարար, և որ 1893 ապրիլ 8 ին Ն. Ա. Իշխանի հարսանեաց

հանդիսին ներկայ եղած էր իւր վկայ, 1894 ին Սթանպուլի անկումէն և այդ հռչակաւոր մարդուն Սօֆիաի փողոցներուն մէջ յօշոտուելէն վերջ, Պ. Կրէքով այդ կուսակցութեան գլուխն անցաւ իր բնակարանէն, սակայն տարի մը վերջը հրաժարելով բուրձնի քաշուեցաւ քաղաքական ասպարէզէն և մինչև հիմա զբաղած էր միմիայն իր անձնական գործերով:

Այժմ Իշխանը անթիւ հեռագիրներ կը ստանայ երկրին հեռաւոր անկիւններէն իր բրած յաջող և նպատակայարմար ընտրութեան համար, վասնզի Պ. Կրէքով իր բնակարանէն, հայրենասէր խոհեմ և փորձառու մարդ շատ յարգուած էր թէ իր հայրենիքին մէջ և թէ անկէ դուրս:

Պ. Կրէքով թէև նախ ուզեց Պուլկարիոյ մէջ գոյութիւն ունեցող բոլոր կուսակցութիւններու շահերը իրար միացնելով, անոնց պարագլուխներէն կազմել նախարարութիւնը, սակայն չը յաջողեցաւ և դիմեց Ռատոսլավօֆին: Այս վերջինը, որ ահագին ժողովրդականութիւն կը վայելէ այս երկրին մէջ, աջակցեցաւ Կրէքովին և երկուքը կազմեցին նախարարութիւնը, որ պիտի պաշտօնավարէ այդ երկուքին՝ Կրէքով—Ռատոսլավօֆին առաջնորդութեամբ:

Նոր նախարարութեան մէջ կը մտնեն երեք ըստօրէն իսթներ

Վ. Ռատոսլավօֆ, Բ. Բէշէֆ և Տ. Թոնչէֆ իւր Ս. Թէնէֆ և Թ. Լ. վանչօֆ, թէև չեն պատկանիր ու է կուսակցութեան բայց ծանօթ են իւր խելացի, գործունեայ և հայրենասէր անձնաւորութիւններ:

Սակայն ի հարկէ ո՛չ մենք և ո՛չ ալ Պուլկարիոյ ժողովորդը չը պիտի շինանք այնչափ մեր Պ. նախարարներուն անուններովը և անցեալովը, որչափ անոնց ապագային կատարելիք գործերով: Բնա՛ւ կարելի չէ ուրանալ թէ երկիրը որ այժմ ելեմտական տեսակէտով շատ անախանձելի կացութեան մէջ է, կը նմանի ովկէանոսի մը ընդարձակութեան մէջ սաստիկ փոթորիկի մը բռնուած նաւու: նոր նախարարութեան կը մնայ զայն ապահով իր նաւահանգիստը հասցնել:

Կառավարութիւնը 50 միլիոնի պարտք մը ունի, որուն պայմանաժամը եկած է և շուտ պէտք է վճարէ: Արեւելեան Բուլղարի երկաթուղիներուն պայմանագրութիւնը մինչև 1899 փետր. 1 (յուլիւր. 20) Սուլթանէն վաւերացուած չըլլալուն նոյն պայմանագրութեան 19-րդ. յօդուածին համաձայն չեղեալ պէտք է նկատուի, սակայն դժբախտութիւնը հոն է որ միևնոյն պայմանագրութեան հետ միասին ջուրը կիլինայ նաև այն փոխառութիւնը, որով Սթոյլիովի նախարարութիւնը կուզէր փրկել իր պատիւը: Եւ այժմ նոր նա-

խարարները մեծ ճիգեր կը թափեն երկրին նպատաւար փոխառութիւն մը ընելու համար: Բանակցութիւնները սկսուած են արդէն և շուտով պիտի կարգադրուի հաւանորէն:

Միւս կողմէն Պուլկարիոյ ժողովրդին մէջ հիմա ընդհանրապէս այն հաստատեցը կը տիրէ թէ այժմեան երեսփոխաններու մեծամասնութիւնը ընտրուած է աւելի ոստիկանական սուխներով քան թէ ժողովրդին ազատ քուէով: Այժմ Կրէքով—Ռատոսլավօֆ նախարարութեան կը մնայ անմիջապէս լուծել Սօպրանիէն, և կատարել տալ նոր ընտրութիւններ, «խղճի կատարեալ ազատութիւնով և իսկական ազար քուէարկութիւնով», որպէս զի ժողովուրդը կարենայ իրեն ճշմարիտ ներկայացուցիչները ունենալ այն Սօպրանիէին մէջ, որ իրեն համար օրէնքներ կը ստեղծէ, և միևնոյն ժամանակ առիթ ունենայ իր իսկական վստահութիւնը յայտնելու: նոր զեկավարներուն: Հոնրային կարծիքը այն է թէ իր երու ընթացքին ամենէն օրինաւոր ելք մը տալու միակ կտրուկ միջոցն այս է:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Կ. Չ. Ռուսոնոյ. — Ձեր ոտանաւորները հրատարակութեան անյարմար են: Խորհուրդ կուտանք որ շարունակ ընթերցումներ բնէք և թիրեւս աշխատելով յաջողիք:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ս Ա Յ Ր Հ Ա Յ Ո Ւ Յ Ի Ն

Մայրենան մի գեղեցիկ ու լուսնկայ գիշեր, Գ. քաղաքում, Մարիցա գետի ափին տաճկական ճաշակով երկյարկանի մի տան բաց պատուհանի դռնը նստել էր մի համակրելի, մօտ յիսուս տարիկան հայուհի-տիկին Շուշանը: Գետ մի տարի առաջ, նրա մազերը սեւ էին սեւ սաթի պէս, այսօրը մանկահաս կնոջ թարմութիւնը և կարմրութիւնը ունէին, աչքերը կեանքով լիքը և վառվառն ժպիտը միշտ շրթունքների վրա, այնպէս որ տիկնոջ հասակակից կանայք նախանձում էին, որովհետեւ իրանք վաղուց չորացել ու ցամաքել էին: Բայց վերջին տարվայ մէջ փոխվեց իւր տիկին Շուշանը, նրա գոյնը թուաւ, աչքերը պղտորվեցին, մազերի մէջ երեւացին արծաթ թելեր, ժպիտը վերացաւ շրթունքներից: Դէմքը թախտալի, երբ մենակ է մնում, աչքերը թրջվում են, երեսի վրա կնճիւններ գոյանում և նա ընկնում է ծանր խոհերի մէջ: Այդ գիշեր էլ տիկին Շուշանը տխուր էր: Լուսնի շողքը ճեղքելով գետափի վրա բուսած ծառերի ճիւղերը՝ լուսավորում էր նրա վշտահար դէմքը, նա իր մոլորած, փնտրող և սպասող նայածքը սահեցնելով արծաթազօծ ջրային մակերեսէն վրայով մխել է հեռու հորիզոնի մէջ. գետից

գիշող մեզմ գեփուրը խաղում է նրա աղանջի վրա փոփած արծաթաթել խոպոպիկի հետ: Տիկին Շուշանը նայում է դէպի հորիզոն, մտաբերում անցեալը և այն օրերը երբ ինքը նոր հարս էր գրէթէ: Այն ժամանակ Բուլղարիան գերի էր. նրա կտրիճ զաւակները ճիգ էին թափում ազատելին, մորթվում, մեծ փողոցի վրա, կամուրջի ծայրին: Մորթված բուլղարները նստվում էին Մարիցայի մէջ, և Մարիցան այդ դիակները Բուլղարիոյ հետ և խուլ անկիւններին թերեւ հասցնում էր մինչև իրանց աների առջևը, բուլղար ձկնորսը իր կարթը գցում էր և ձկան փոխարէն խորում իր մորթված եղբոր դիակի մէջ:

Բուլղարիան արեան դաշտ էր, տանջված, բռնաբարված, յօշոտված բուլղարուհիների ճիչը աշխարհ էր բռնել, այդ ճիչը լսում էր և տիկին Շուշանը, նրա սիրտը մղկատու էր, ծակծկվում. ափսոսում էր որ չէր կարող, ոյժ չուներ, օգնելու իր տանջուող հաւատակից քոյրերին: Այդ միջոցին նրա արգանդում ապրում էր իր Գուրգէնը որի նորածնի սիրտը համերաշխութեամբ տրոփում էր իր մօր գթութեամբ և անախտ ժողովրդի համար ցաւող սրտի հետ...

Բայց հասաւ ցանկալի բուրգն, ազատութեան արեւը ծագեց արեւնոտ Բուլղարիոյ վրա, վայրագ տաճիկը հեռացաւ երկրից, հարազատ զաւակների արեւնով ոռոգված երկիրը սկզբսեց ծլել և ծաղկել: Մարիցան ազատվեց իր արեւնոտ գոյնից. մար-

Թ Ղ Ր Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

Կալսց, 27 Յունիս

Այս տարի շատ մեղմ ձմեռ մը ունեցանք: Ամբողջ Ռուսաստանի մէջ գրեթէ բնաւ ցուրտ չըրաւ, Գանուրը սառ չի բռնեց, ինչ որ խիստ քիչ անգամ պատահած է: Տաքութիւններուն պատճառաւ հիւանդութիւններ սկսան երեւան գալ: Քաղաքիս բոլոր հիւանդանոցները լեցուած են օրուան հիւանդութեան վարակուած անձերով: Յաճախ մահեր ալ կը պատահին:

Կալսցի ազգայիններուն մէջ ալ տարածուած է այժմ ընթերցարան մը բանալու գաղափարը: Այս քաղաքը բազմաամսու Պրայիլի աւելի ստուար թիւով կարող պանդուխտներ կը պարունակէ, և եթէ աեղացիներն և քահանան ալ շարժին այնպէս ինչպէս Պրայիլի մէջ եղաւ, մեծ յոյս կայ որ այդ գաղափարը անմիջապէս կիրականանայ: Այս կարգի հաստատութեան մը պէտքը, մանաւանդ հոս, միշտ զգալի է պաղուխներուն մէջ ընթերցարանութեան փափաքը տարածելու և ազգային ինքնաճանաչութեան զգացումը վառ պահելու համար: Եւ եթէ գիշերային վարժարան մըն ալ հաստատեն ընթերցարանին մէջ ուր ձեռնհաս և եռանդուն երիտասարդներ յանձն առնեն ճիւղաբար պանդուխտ գաւառացիներուն գէթ իրենց մայրենի

սիրտը. նա ընկած իր պէս գալար թփի տակ, արեւնքած է լինում և քո անունը իր ցամաքած ու այրող շրթունքներով արասանելով փչում է հոգին...

Այս յայտնութիւնը, շամփրեց տիկին Շուշանի սիրտը, նա խորը հառաչեց, երկու արցունքի խոշոր և յստակ կաթիլներ վար սահեցին նրա գունատ աչքերի վրայով, լուսնի շողքը ընկաւ մայրական արցունքների մէջ և մի առանձին դիւթող փայլ տեց նրան:

Տիկին Շուշանը երկինք նայեց, և մրմնջաց:

— Աստուած իմ, հոգիս առ, Գուրգէնիս մահը չը լսեմ, ինչի՞ նրան ծնեցի...

Թրջված աչքերը կրկին ընկան Մարիցայի ջրերին:

— Այս ինչ է, շնջած տիկին Շուշանը, նոյն Մարիցան ինչ որ էր 25 տարի առաջ, արեւնոտ, լսվում են և բուլղարական ճիչերը... Այժմ այսպէս է և Հայաստանը. Եփրատն ու Երասխը արեւնոտ են. հայ կիները ընկնում են նրանց մէջ, թուրքից ազատվելու համար... Գուրգէնս օգնութեան է գնացել կովում է. մեռնեմ նրա բազուկին... Ձե՛, մահ չեմ ուզում, կապրեմ, ես էլ կանեմ իմ ձեռքից եկածս, տանջող քոյրերիս օգնելու համար և կաղթութեմ որ Գուրգէնիս գնտակը նպատակից չը շեղվի և սուրը միշտ կարուկ լինի...

լեզուն ուսուցանել, ճշմարիտ վերածնութեան գործ մըն է որ առաջ կրնայ գալ ամբողջ Ռուսականայոց համար:

Մենք ապահով ենք որ այս տեսակ հաստատութեան մը հիմնարկութեան համար սշխատող նախաձեռնարկները միշտ պիտի յարգուին Կալացի ազգայիններէն և միանգամայն ս. զբնուպատճառ պիտի հանդիսանան այնպիսի գործի մը ուրկէ ապահովաբար Կալացի հաստատութիւնը մեծապէս պիտի օգտուի:

ԽԵՅՕ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Այս վանքը՝ իր բարոյական ինքնազգեցութեան շնորհիւ թէև բաւական եկամուտի աղբիւրներ կը ստանայ այդ գաւառներու բնակիչներէն, սակայն անյիշատակ դարերէ ի վեր, թոյլ ու ազգայնապէս երկու ոլորման ժամանակներու ձեռքով կառավարուելով բնաւ օգտակար չէ կրցած հանդիսանալ: Իր հարստութիւնը կը կազմէին 250 հատի մօտ ոչխարներ, 15—20 հատ տուար, 50—60 հատ մեղրի փեթակներ ու քանի մը հատ սմբակաւոր կենդանիներ: Այդ մէկ երկու տգէտ վարդապետներուն հետ քանի մը մշակներ, խոտաղներ ու անասն կիներ հաւասար աշխատութեամբ վանքապատկան ամբողջ եկամուտները կը վայելնէ, ո՛չ բան մը կաւելցնեն և ո՛չ ալ շատ բան կը պակսեցնեն:

Այդ առաքելաչէն վանքի գեղակերտ տաճարին հիանալի շինուածքը, իր պատմական ու հնագիտական երեսօթով, փոքր ինչ հետաքրքրութիւն ունեցողին ու շագրութիւնն անմիջապէս կը գրասէ: Իր տաճարին դարաւոր կազմուածքը, ահագին դարերու բեռին ներքեւ կրթած, հայկական հին ճարտարապետութեան ու փառքի անցեալ իրականութեան ապացոյցը կուտայ: Ը և թ դարերուն՝ յիշատակարաններ ու թուականներ կային հոն եղած մէկ երկու ձեռագիր գրքերու ու խաչաքարերու վրայ: Հայաստանի շատ մը վանքերու նման, այս վանքի ձեռագիր հին գրքերը՝ իր անդէս վանականաց անհագութեամբ անհետացած են:

Վանքի պարսպէն վորը ինչ հեռու կաղնիի, ընկուզենիի և զանազան վայրի ծառերու հիւսքանչ անտառակի մը վերեւ, ջուխտակ մը դարասոր կաղնիի ներքեւ, անուշ խոտոշումով մը կը հոսի պաղորակ ու վճիտ աղբիւր մը, որ Ս. Թագեոսի աղօթքով բխած ըլլալ կը պատմեն: Այս անմահական աղբիւրին քով, գրախոտի կանանչներով հիւստած մարմանդի մէջ, ժամերով նստած ու յափշտակուած մտքով գիտեցիւր Սասնոյ այն հսկայ ու բարձ-

րարերձ լեռները, որոնց վրայ տակաւին ազատութիւն սիրող ու հայ արիւն կրող ափ մը հայ քաջեր կապրէին, և որոնք սուրը արօրէն նախամեծար դասելով, ապաստան գտած էին հայրենիքի մէկ ի որչին այդ անմահաշէլի լեռանց վրայ: Ս. Աղբերկայ վանքը Մշոյ առաջնորդարանի իրաւասութեան կը վերաբերի:

Խոյթի գաւառակը իր 10—12 հայ և քիւրտ զիւզերով սահմանակից է Սասունի, Բռնաչէնին, Չիուրի ու Մօսկանու: Այս գաւառին լեռնային մասը որ Սասնոյ յարակից սարերուն մէջ կ'ընկնայ՝ իր դիրքով աւելի խորտու սէգ բնութիւն մը օժտած է տեղացի լեռնական ժողովուրդին: Լեռներու մէջ նշանաւոր են Ս. Աղբերկայ սարը՝ Բռնաչէնի գլուխ՝ որ իր յարակից անհամար լեռնաշղթայով Սասնոյ ու Շատախու սարերու հետ զօգուած, Տաւրոսի մեծ շղթային օղակները կը յօրինեն: Խոյթի հովանի բնակիչները կը մշակեն ցորեն, գարի, կորեակ, գլղը, կանեփ ու բանջարեղեններու մէկ քանի տեսակները: Իսկ լեռնային մասի բնակիչները գրէթէ Սասունցոց նման կորեակ, գլղը, քիչ քանակութեամբ ցորեն կը մշակեն: Ոչխարաբուծութիւն ու մեղուատածութիւնը իրենց զբաղմանց զլխաւոր առարկաներն էին: Բնահամայնապէս Տաւրոսի այս գաւառաւէտ շղթային երկայնքը տարածուած գաւառներու իւրն ու մեղրը իրենց տեսակներուն մէջ, շատ ընտիր են, ու եթէ Թուրք մեռած կառավարութեան հոտած ուղեղի բէթիմը՝ մի անգամ ընդ միշտ ջնջուելով ապահով ու կանոնաւոր կերպով երկիրը կառավարուի, օր մը, լեռնցի սո ժողովուրդը, միայն ոչխարատածութեամբ ու մեղուաբուծութեամբ, շատ անցորդ ու շատ երջանիկ կեանք մը կրնայ անցունել: Ամբողջ Խոյթի հայ գիւղերը ունին իրենց քարաչէն եկեղեցիները: Բայց երեք չորս գիւղի համար հազու մէկ քահանայ կայ: Երբեք դպրոցի երես չեն տեսած: Տգիտութիւնն ալ աղքատութեան հաւասար չափով աւելներ կը զօրծէ հոս: Թէ Սասնոյ գէպերու և թէ ՁՅի ընդհանուր կոտորածին ատեն այս գաւառն ալ ենթարկուեցաւ իւր օրի ու թրքի անհանդուրժելի աւերումին ու անգութ սրբաձութեան: Ու այդ անպատմելի տուայտանքներէ ետք, եթէ հիմա ալ մը ողորմելի հայեր կան ու կապրին հոն, անոր ալ զազունիքը պէտք է փնտռել հայրենիքի ու հաւատքի այն անջինջ յիշատակներուն ու հոգեկան անխղելի կապերուն մէջ, որով այդ չարքաշ ու հայրենասէր ժողովուրդը, այնքան սեղմ կերպով կապուած իր հողին ու ջրին, համբերութեան սարօրինակ ու-

ժով մը կը դիմանայ իր գլխին թափուած քստմնելի հալածանքներուն ու հարստահարութեանց: Խոյթ՝ առանձին գիւղախումբ մը կը կազմէ «Չուր» զայնպէս անթեան ներքեւ:

ՆԱՀԱ-ՊԵՏ

(Շարունակելի)

ՄԱՐԻ-ԼՈՒԻՉ

ԻՆՏԵՆՍԻՎԻՆ ՎԵՐՋԻՆ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐԸ

Ահա աւելի իշխանուհոյն վերջին վայրկեաններուն վրայ մէկ քանի վաւերական տեղեկութիւններ:

Երբ բժիշկները հիւանդութեան ծանրութիւնը զգացին անմիջապէս իմացուցին իշխան Թէրտինանտի թէ ամէն յոյս կորուած էր այլ ևս:

Իշխանուհին ինքն իսկ զգած վիճակի ծանրութիւնը և վափազ յայրնեց իր աղաքները տեսնել:

«Ես կը մեռնիմ, ըսաւ իշխանին, բայց միշտ քեզ հետ պիտի ըլլամ, և երկնքի բարձունքէն, պիտի հսկեմ Պուլկարիոյ, քու և տղաքներուս վրայ»:

Յետոյ Պորիս իշխանին դառնալով աւելցուց. «Երբ օր մը իշխանութեան կը կոչուիս, ջանա՛ւ օրինակելի վեհապետ մը ըլլալ»:

Ժամը ճին տեսնելը իշխանուհին զգայնութիւնը կորսնցուց պահ մը վերջը արդէն շունջը փչած էր:

Եւրոպական բոլոր թերթերը ընդարձակ յօդուածներ նուիրած են իշխանուհոյն բարեմասնութիւնները գրուածոց: Ռուսական լրագիր մը կը լսէ թէ իշխանուհին որ իրապէս եղբրական վախճան մը ունեցաւ, սրտի ու մտքի աննման յատկութիւններով օժտուած էր: Ռուս ժողովուրդը բոլոր սրբանոյ պիտի մասնակցի, կը լսէ նոյն լրագիրը, պուլկար ժողովրդեան ցաւերուն, որուն խնամակալն եղած է միշտ:

Եւրոպական բոլոր արքունիքները հրամայած են որոշեալ ժամանակով սուղ պահել իրենց պալատներուն մէջ:

ՔՐՈՆԻԿ

Գարակէօղեան կուսկին անպատիւ սակարկութիւնը վերջնականապէս աւարտած է: Վերջնական յայտագրին համաձայն մօտաւորապէս պիտի ձեռնարկուի որ ըրանցին շինութեան և կալուածներու գնումին, որոնք մինչեւ մէկ տարիէն պիտի աւարտին, և թէ նոր փորձանքի մը չի հանդիպին անշուշտ:

Վանէն հասած լուրերէն կը տեղեկանանք թէ ժամանակէ մը ի վեր սաստիկ սովի վիճակ մը երեւան եկած է և ժողովուրդը

ծայրայեղ կարօտութեան ենթարկուած է:

Այս առթիւ Պոլսոյ Խառն Ժողովը որոշեւ է Կայս. բարեխնամ կառավարութեան ներկայացնել իրերու այս վիճակը և դարման խնդրել:

Բարեխնամ կառավարութիւնը այս տեսակ դարմաններ գտնելու համար գծուարութիւն բնաւ չի քաշեւ: Ձարդ մը, և ամէն բան կը դարմանուի: Կը դարմանանք մեր Պոլսոյ ժողովականներուն խելքին թէ ինչպէ՞ս սովի դարման կը սպասեն կառավարութենէ մը որ ինքն իսկ անդամանելի սովի մը ենթարկուած է տարիներէ ի վեր:

—Պաթումի մէջ «հայկական երեկոյթ» մը պիտի սարքուի բարեգործական նպատակով, ինչպէս Ս. Բեդերսպուրկի և Մոսկուաի մէջ կատարած են արդէն և որոնց զոյացած հասոյթէն հայ գաղթականներու և որբերու համար կարեւոր գումարներ հաւաքուած:

—Նախիջեւանի մէջ պիտի հրատարակուի «Կեանք» անունով վեցամսեայ հանդէս մը որ պիտի զբաղի գրական, ընկերական ու գեղարուեստական հարցերով:

Հրատարակիչ ու խմբագիրն է Ժընէվի նախկին ուսանող մը, Մինաս Պէրպէրեան:

—Ի նպատակ տեղիս ազգ. վարժարանի շինութեան պարտքին տըրուած պարահանգէսին կարգադիր մասնախումբը կը ծանուցանէ թէ զոյացած հասոյթէն 625 արծաթ ֆր. յանձնուել է պարտատէրներուն, որոնք պատասխաններ են թէ՛ վարժարանին շինութեանէն միայն իրենց ունեցած պահանջքն է 2334.85 ֆրանք արծաթ և 546.40 ֆրանք ոսկի որոնց վրայ ըստ օրինի պէտք է աւելցնել նաև հարկերին: 2էն տարեկան 290—300 ֆր. մօտ գումարը, առանց հաշուելու մանր մուկը ծախսերը, նաև գծողութիւն յայտներ են որ վարժարանին շինութեան անունով մէկ ու կէս տարի առաջ գնուած ապրանքներէն դեռ ոչինչ վճարուած չէ: Պարտատէրները աւելցուցեր են թէ՛ երբ ժամանակ մըն ալ յիշեալ պարտքերը անվճար մնան, պիտի ստիպուին աղգային կալուածներէն մէկը վճարուել:

Կարգադիր մասնախումբը յիշեալ տեղեկութիւնները հաղորդելով, հասարակութեան խոշորագրութիւնը կը հրաւիրէ այս անկերպարան վիճակին վրայ և կը խնդրէ որ ամէն նկատու և անձնական հաշիւներ մէկ կողմ ձգելով համախոհութեամբ աշխատին առաջին առնել այն անպատահութեանց՝ որոնք կրնան յառաջիկային վառնայի հայութեան պատիւը ազարտել:

ՔԱՂԱՔԱՎԱՆ ԴԵՊՔԵՐ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Արեւելեան երկաթուղեայ գըն- ման պայմանագրութիւնը Բ. Իրան կողմէ փետր. 1ին վաւե- րացուած չըլլալուն պատճառով, երկաթուղիներու գնման գործը ինչպէս նաեւ փոխառութիւնը շուրջ ինկած է, պայմանագրու- թեան 16րդ յօդուածին համա- ձայն:

Բայց փոխառութեան մը պէս- քը անհրաժեշտ դարձած ըլլալով, նոր դահլիճը որոշած է կրկին բա- նակցութեանց մասնէ շուտով գո- հացուցիչ լուծումի մը յանգելու համար:

—Սուլթանը իմաց առած է Պոլսոյ Պուլկարական գործակա- տարին թէ, Արեւելեան երկա- թուղեայ պայմանագրութեան մասին իր որոշումը պիտի յայտ- նէ Պարիսի տօներէն ետք:

—Ն. Ա. Բ. իշխանուհւոյն թա- ղումէն ետք, նոր դահլիճին ա- ռաշին զբաղումը պիտի ըլլայ իշխանէն Սօպրանիէի լուծման և նոր ընտրութեանց թոյլտու- թիւն ստանալ, որովհետեւ արդի երեսփոխանութիւնը, ըստ նոր դահլիճի կարծիքին, բռնութեան տակ ընտրուած է և ոչ թէ ժո- ղովրդական ազատ կամքով:

—Պախմէթիէֆ, Ռուսոյ Սօ- ֆիաի ղեկավար Ս. Բեթերսպուր- կէն Վիէննա գալով, ուղղակի Գան մեկնած է, հակառակ իշ- խանուհւոյն թաղման հանդէսին: Բաղաքական շրջանակներու մէջ կը կարծուի թէ այս անպատեհ մեկնումը Կրէքոֆի նոր դահլի- ճին նախկին ուստատեացներէ կազմուած ըլլալն է:

Ա. Լ. ՊԱՆԻԱ

Վերջերս Իրէքի մէջ (Բոսովա) ալպանացի պետերու ժողով մը տեղի ունեցած է, որուն մաս- նակցած են նահանգին բոլոր իս- լամ երեւելիները: Այս ժողովին որոշումներու մասին կատարեալ լուծիւն կը ջանան պահել: Կըսուի թէ՛ ժողովին մէջ՝ որոշե- ր են Սուլթանին հաւատարմու- թեան գիր մը զրկել և յայտնել թէ ամէն պարագայի մէջ պատ- րաստ պիտի գտնուին Սուլթանին իշխանութեան գէմ ըլլալիք և և է յարձակման մը ատեն, երկի- րը պաշտպանելու:

Ալպանացի պետերու աս ժո- ղովին, ներկայ գտնուած են Սուլթանին երկու մասնաւոր պատուիրակները, որով կը հաս- տատուի թէ ուղղակի տաճիկ կա- ռավարութեան գրգմամբ կա- տարուած է այդ գումարումը:

Թ Ո Ւ Բ Ք Ի Ա

Թուրքիոյ Ս. Բեթերսպուրկի ղեկավարը, Հիւանի փաշա, հրա- հանգ ստացած է Սուլթանէն Չա- րին յայտնելու Սուլթան Համիտի

շնորհակալութիւնը, այն խաղա- ղասիրական և բարեկամական նոր ապացոյցներուն համար, զորս Ռուսաց կայսրը վերջին ժա- մանակներս ցցուցած է իրեն հանդէպ: Բայց հակառակ ասոր կըսէ գերմանական թերթ մը, Բ. Դուռը մեծ եռանդով կը շա- րունակէ իր պատրաստութիւննե- րը Սակեթոնական սահմանազը- խին վրայ: Վերջին շաբթուն Թոյներէն գերի առնուած բոլոր Գրուբի թնդանօթները Սակե- թոնիոյ Պուլկարական սահման- ներուն վրայ տեղափոխուեցան, ինչպէս նաեւ 40 վակոն ռազմա- մթերք զրկուեցան:

—Գերմանիա, Աւստրիա և Ռուսիա համոզուած ըլլալով որ Սակեթոնիոյ մէջ առաջ գալիք խռովութիւնները կրնան միջազ- ցային խաղաղութիւնը վրդովել, վերջին երկու տէրութիւնները Գերմանիոյ կայսրը գիմում ըրած են ինդերնու որ իր բոլոր ազ- դեցութիւնը Սուլթանին վրայ ի գործ դնէ, Սակեթոնիոյ մէջ մէկ քանի բարենորոգումներ ներ- մուծելու համար:

Թէև Սուլթանը շատ քիչ արա- մագիր է այս կարգի բարենորո- գումներ մտցնելու, և սակայն Գերմանիոյ կայսրը Ռուսիոյ ղեկ- պանին հետ տեսակցութիւն մը ունեցած, և յետո, իր Արտա- քին գործոց նախարարին հետ խորհրդակցութիւն մը կատա- րած է այս մասին:

Միւս կողմէ, Աւստրիոյ Պոլսի ղեկավարը, Պ. Գալիս, որ ղեկա- պանական մարմիններ իրարմէն է, այս խնդրին վրայ Սուլթա- նին հետ բազմաթիւ տեսակցու- թիւններ ունեցած է:

—Մալիւմաթ» պաշտօնական թերթը Սուլթանին ուղղուած ա- ղերագիր մը հրատարակած է ներքին գործոց նախարար Մէհ- մէտ փաշայի դէմ, ուր ծանր արտուղններ կը բարձրանան ա- նոր դէմ. «Մալիւմաթ»-ի այդ թերթ ամբողջովին գրաւուած է:

—Պուլկարիոյ իշխանուհւոյն թաղման Սուլթանին կողմէ ներ- կայ գտնուելու համար, երէկ Շաքիր փաշան Սօֆիա մեկնե- ցաւ:

ՅԻԼԻՊՊԵԱՆ ԿՂՋԻՔ

Մանիլի Պելճիգական ղեկավարը որ Սան-Պրանչէսքօէն կը գառ- նար, յայտարարած է թէ Փի- լիպպեաններուն մէջ 80,000 զին- եալ մարդիկ կան միշտ պատ- րաստ կռուի: Հաւանական է որ Միացեալ-Նահանգներու և տե- ղացիներու միջեւ ընդհարում մը կրնայ շատ ազեղեալ ըլլալ Ա- մերիկացոց համար:

—Փիլիպպեան կղզիները գըռ- նուած ամերիկեան զօրքերուն առողջական վիճակը խիստ ան- զոհացուցիչ է: Մալկի համաճա- րակ մը մեծ զոհեր կը պատճա- րէ:

— Ամերիկեան աղբիւրներէ հասած վերջին հեռագիրներէն կը տեղեկանանք թէ Ամերիկաց- ւոց և տեղացիներու միջեւ պա- տերազմը սկսած է: Տեղացիները Մանիլի վրայ յարձակած են և քաղաքը կրակի տուած: Կրակը 15 ժամ տեւած է: Ամերիկացիք ամէն կողմէ ետ մղած են տեղա- ցիները, մեծ կորուստներ պատ- ճառելով: Ամերիկեան զօրքերէն 50 վիրաւորուած և մէկ քանի սպաննուածներ կան:

—Ուրիշ հեռագիր մը բոլորու- վին կը հերքէ ապստամբութեան մը լուրը:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Տօպրիչ գաւառին Տէլէճի-Գէօյ անուն գիւղին մէջ, 1893ին սար- սափելի ոճիր մը գործուած էր: Սլավօֆ և Աթանասօֆ անուն երկու շարագործներ Նիքօլա Մօ- քանչէ անուն հարուստի մը տունը մտնելով սպաննած էին զայն և բաւական մեծ կակ գողութիւն մը կատարած:

Գէպքին հեղինակները երկար ատեն ծածուկ մնալէ ետք, 1896ին կառավարութիւնը յաջողած էր ձերբակալել: Այս անգամ եղեռ- նագատ ատեանը մահուան դա- տապարտած ըլլալով, դատավճի- ւր իշխանին զրկուած էր վաւե- րացիներու համար:

Այժմ ամբաստանեալներու փա- տարան Գանէֆի նախաձեռնու- թեամբ, վերջին փորձ մը կը ջանան կատարել դատավճիւրը մեղմացնելու համար: Ուստի հե- ռագիր մը զրկուած է այս իմաս- տով իշխանին ուր ստորագրած են տեղւոյս պուլկարական առաջ- նորդը և ուրիշ երեւելի անձնա- լորութիւններ:

—Ռուսմանիոյ գիւղերուն մէջ ապստամբական շարժումներ սկսան երեւան գալ, կառավարութիւնը շատ մտահոգութեան մէջ ըլլալ կը կարծուի:

—Գերմանիոյ կայսրը շնորհա- կալութեան հեռագիր զրկած է Սուլթանին Պոլսոյ և Բէօսթէնէի միջեւ հեռագրական գծի մը շի- նութեան և շահագործման ար- տօնութիւնը գերման ընկերու- թեան մը շնորհած ըլլալուն հա- մար:

—Յառաջիկայ մայիս 26ին Թիֆլիսի մէջ պիտի տօնուի ու- սաց ամենամեծ բանաստեղծին, Բուշքիի հարիւրամեակը:

—Ռուսման գեղացիներու ա- պրտամբութիւնը որ սկսած է Դանուբի եզերքը գտնուած գա- լառներու մէջ, և որուն պատ- ճառը եղած էր գեղացիներուն հողերու գնման համար մեծամեծ գիւրութիւններ մատակարարող գիւղական պանքաներու հաստա- տութեան խնդրին ձերակոյտէն մերժուիլը, մեծ ծաւալ դտած է այդ գաւառներուն մէջ: Ապրու- տամբները, բահով ու բրիչով

զրկուած զօրքերուն վրայ յար- ձակելով ետ մղեր են անոնք:

Մանր միջազգայնեան կրօնա- ուի:

ՊՕՐՍԱ

Վառնա 30 Յունուար

ՊՈՒԼՏԱՅ

Վազօն, լիպրա 55—58, հէքթօլ. 9—10.20 ֆրանք
Արապա, լիպրա 55—60 հէքթօլ. 9—11.50 ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա 42—50 հէքթօլ. 6.40—6.80 ֆրանք

ՄԻՍԻՐ

Վազօն, 55—57 լիպրա, 6—6.05
Առապա, 55—60 լիպրա, 6—6.20
Կիւնկէ 15—20 վազօն, 25—30 պոսպա կէմէքտէ տիր:

ՏԱՐԸ

Կիւնկէ 1/2 արապա կէմէքտէ տիր. 58—60 լիպրա, 5.40—5.80 ֆրանք
Առապա մուսալէսի նարուէն 21 ֆրանք հիսապը իւլէ տիր:

ՎԱՐԳՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱՅՆ ԿԵԱՆՔԻՑ)

(Գին 1 Պրանք)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնաի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպպէ Տ. Անտօն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալախ- ևնի սրճարանը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման, հասցեատման, նամա- կագրութեան, հարսանիական հրաւի- րագիր, մահազգ, ինչպէս նաեւ պրօշիւտներ:

Գիններն յոյժ գիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգու- թեամբ և փութով կը կատարուին:

ՄԵԼՔԻՍԵՆԵԿ ԵՊՈ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ ՊԱՏՈՒՆՔԻՆ ՔՐԻՍՏՈՆԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՍՆՈՅ ԿԱԼՎՅՑ

Տպարան «ԱՆԻ» 1898
Գին 3.50 ֆրանք

Կը ծախուի Կ. Պոլսոյ Պ. Պալենց գրատան և Պօքշան (Ռուսմանիա) Վ. Մամիկոնեանի մօտ:

ԲԱՉՄԱՎԷՊ

Ա. Մ. Ս. Ս. Ե. Ր. Ք.

57րդ Տարի
Տարեկան գին՝ 10 ֆր. — 4 բուպ- լի. — 2 Տոլար:
Հասցէ՝ Բէտաքսիոն սը լա ոքլի- Բագմովէպ. Ս. Լաղար:
Վընիզ (Իթալի)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Տէր Անտօն Գ. Փափագեանի հայերէն—ուսմաներէն տարե- ցոյցը, պատկերազարդ և ճոխ պարունակութեամբ, Գինն է թղթակազմին 1 ֆր. լաթա- կազմին 1.50 և փառակազմին 2 ֆր.:

Գիմնէլ հեղինակին, Կալսոց:

Отговорникъ: А. СУКЯСОВЪ
Печатница «Взаимность», Варна